№ 6 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ՅՈՒՆՎԱՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ՅՈՒՆՎԱՐԻ № 6

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գին 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—[illegible]
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենուրեք.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Տպարանի տէլէֆոն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1912 Թ. ՀԱՄԱՐ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը. նոյնպէս 10 ռ., 10 ամսվանը՝ 9 ռ., 9 ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., 7 և 6 ամսվանը՝ 6 ռ., 5 ամսվանը՝ 5 ռ., 4 ամսվանը՝ 4 ռ., 3 ամսվանը՝ 3 ռ., 2 ամսվանը՝ 2 ռ., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և մի-ևնոյն ժամանակ 40 կ. նամակապրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կայցնել փոխադրական ցուցակի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՕՐ"

Գրական-գիտական-գեղարուեստական-հասարակական եւ խաղաղասիրական
ԱՄՍԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1912 Թ. ՀԱՄԱՐ
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամսագիրը հրատարակվելու է ամեն ամսվայ վերջին և բաղկացած է լինելու առնուազն 8 տպագրական թերթից (նարօր) և աւելի՝ եթէ միջոցները ներեն։

Ռուսաստանի համար — Տարեկան բաժանորդագինն — 6 ռուբլի։
«Մշակի» տարեկան բաժանորդների համար 4 ռուբլի։

Արտասահմանի համար — Եւրոպա — 20 ֆրանկ. «Մշակի» բաժ. համար 16 ֆր.
Ամերիկա — 4 դոլար. » » » 3 դոլ.
Թիւրքիա — 6 ռուբլի » » » 4 ռ.
Պարսկ. — 6 ռուբլի » » » 4 ռ.

Ամեն մի համարը առանձին արժէ 50 կոպ.։
Հասցէն. Тифлисъ, Сергіевская №5. Редакція журнала „Ароръ".
Tiflis, Rédaction de la Revue „Aror".
Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

„ԱՐՕՐ"
1910 և 1911 Թ. Թ.

Ցանկացողները կարող են ստանալ «Արօրի» նախորդ, այն է 1910 և 1911 թ. թ. բոլոր համարները, վճարելով իւրաքանչիւր տարվան 4 ռուբլի. իսկ «Մշակի» կամ «Արօրի» 1911թ. բաժանորդները՝ 3 ռուբլի։

Յունվարի 10-ին, ցերեկվայ ժամը 1-ին սրտի պայթումից վախճանվեց Թիֆլիսի Կուսանաց վանքի միաբան

ԿՈՅՍ ՄԱՆԻԱ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են մայրապետ Հռիփսիմէ Թայիրեանը և միաբան քոյրերը։ Ամփիծը ամեն երեկոյ, ժամը 6-ին։ Մարմինը կը փոխադրվի Կուսանաց վանքի եկեղեցին շաբաթ օրը ժամը 3-ին, որտեղ կիրակի օրը ժամը 10-ին կը մատուցվի պատարագ, որից յետոյ կը կատարվի թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 14. 2—1

Ստեփան Յարութիւնեան, Գայիանէ Մելքոնեան, Դիմուհի Խաչատրեան Օհանջանեաններն իրանց զաւակներով, Հռիփսիմէ Մարգարեանը և Արամ Արտաշէսեանը խորին վշտով յայտնում են իրանց ծանօթներին և ազգականներին՝ առաջինը իր սիրելի եղբօր, երկրորդները իրանց թանգագին տաքեր և հօրեղբօր, չորրորդը իր սիրելի եղբօր, իսկ հինգերորդը իր անմոռանալի հօր՝

Արտաշէս Յարութիւնեան Օհանջանեանի

մահը։ Ամփիծը կատարվելու է հինգշաբթի յունվարի 12-ին, երեկոյեան ժամը 6-ին, Զգլաշէնի ս. Աւետաց եկեղեցում, իսկ թաղումը ուրբաթ՝ Խօջիվանքի գերեզմանատանը։ 13. 1—1

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Օպերային ընկերակցութիւն Ի. Պ. ՊԱԼԻԵՎԻ ղեկավարութեամբ
Ուրբաթ, յունվարի 13-ին
ԲՕԳՈՒՏ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
տրվելու է
ԿԱՄՕՐԱ
Երկիծական օպերա, էսպոզիտոյի, 3 գործողութեամբ։
Մասնակցութեամբ Գիտերի, Դեմեանէնկոյի, Եւլախովի, Կայսերական թատրոնների դերասանուհի ՉԱԼԵՎԱՑԻ, Կարանովիչի, Կանտորի, Լազարեվի, Պովցովի, Բոստովսկայայի, Սերգէեվի, Սօկոլսկիի և Սարիժենովայի։
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՑ ՑԵՏՈՑ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԻՆ բարեհաճ մասնակցութեամբ
Կարատովի, Կովելկովայի, Մազուրինի և Շուլգինայի։
Տոմսակները ստանալ Արքունական թատրոնում։ ✦ Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
(ա.օ.) առ. 10. 3—2

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամ. 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տէլէֆոն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—73

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Պլոմբ, արհեստական ատամներ իւրաքանչիւրը 1 ռուբլի, և այլն։
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ։
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Երևանեան հրապարակ տ. Խաչատրեանի
(Ի.Հ.Կ.) առ. 876. 50—50

ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ ИНТЕЛЛИГЕНТНАЯ
ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.
100—85 662.

ПАПИРОСЫ ЛЕВЪ 20 шт. 5 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
առ.

ПАПИРОСЫ ЭКСТРА 15 шт. 6 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
Ի.Հ.Կ.)

Ամենալաւը աշխարհում՝ սննդարարութեան և ախորժելի համի կողմից՝ համարվում են
ԴԷ-ՎԻԼԼԱՐԻ չվէյցարական ՇՈԿՈԼԱԴԸ և ԿԱԿԱՕՆ
Ֆրիբուրգում (Շվէյցարիա)
Վաճառվում են ամենուրեք։
Գլխաւոր գործակալ՝ Ա. Ա. Կուտուզով
Ելիսավետգրադում։
(առ.) 1195. 10—6

ԲԺԻՇԿ
Գ.Ր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանձակայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տէլէֆոն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(Ի.Հ.Կ.) առ. 819. 100—50

ՈՂՋՈՒՅՆ ՀԻՒՐԵՐԻՆ

Այսօր սպասվում են Ռուսաստանում անգլիական հիւրեր, որոնք գալիս են իբրև անգլիական ազգի ներկայացուցիչներ ողջունելու բարեկամական զգացումներով իրանց դաշնակից դարձած ռուս ազգին։

Դա խոշոր քաղաքական և հասարակական երեւոյթ է, որ ունի պատմական խոշոր նշանակութիւն։

Ցանեակ տարիների շրջաններում, նոյնիսկ դարերի ընթացքում անգլիական և ռուս ազգերը խորթ են նայել իրար վրա, հակառակորդներ են եղել միմեանց, վնասել են մէկ-մէկու և այն կարծիքին են եղել, որ նրանց շահերը բոլորովին անհաշտելի են և մէկը միւսին բացասող ու արտաքսող։

Բայց ահա վերջին երկու տասնեակ տարիներում նախկին տրամադրութիւնները ենթարկվեցին փոփոխութեան։ Ռուսական և անգլիական քաղաքագէտներ, մտածողներ, պետական գործողներ կամաց-կամաց սկսեցին համոզվել, որ երկու խոշոր ազգերի փոխադարձ հակառակութիւնը և մրցումը վնասում է երկուսին էլ, թուլացնելով նրանցից իւրաքանչիւրին և միջոց տալով միւս ազգերին իրանց ձեռքը զգելու այն, ինչ որ անգլիացու կամ ռուսի ձեռքին պէտք է լինէր։

Եւ արտասանվեցին հաշտութեան և համաձայնութեան հրաւէրներ դէպի միմեանց։

— Մեր շահերը փոխադարձօրէն պահանջում են, որ մենք լինենք համերաշխ, և փոխանակ միմեանց վնասելու և չլսելու՝ աշխատենք իրար մեր երկուսի օգտի համար։

Խօսեցին, գրեցին, կազմեցին խորհրդակցութիւններ, հիմնեցին ռուս-անգլիական կոմիտէ, անգլիական գրող Ստէդ եկաւ Ռուսաստան յայտնելու մի ստուար խմբի կողմից բարեացակամութիւն Ռուսաստանին, ռուս պարլամենտականներ գնացին Անգլիա և ջերմագին ընդունվեցին։ Միևնոյն ժամանակ երկու ազգի կառավարութիւնները օգոստափառ ներկայացուցիչների հանդիպումներով և յատուկ դիպլոմատիական համաձայնութիւններով մօտեցան միմեանց և պատրաստեցին հող աւելի ևս սերտ քաղաքական մերձեցման համար։

Ռուս-ֆրանսիական միութեան կից հանդէս եկան անգլո-ֆրանսիական և անգլո-ռուսական համաձայնութիւն. անգլո-եապոնական դաշնակցութեան կից կազմվեց ռուս-եապոնական համաձայնութիւն. Պարսկաստանի դէպքերը առաջ բերին ռուս-անգլիական նոր համաձայնութիւն պարսկական գործերի վերաբերութեամբ։

Այդպիսով կազմվեցին մի շարք քաղաքական համաձայնութիւններ, որոնք աւելի ու աւելի մօտեցնում էին ռուսական և անգլիական ազգերը միմեանց։

Քաղաքական տեսակէտների հանրացման հետ զուգընթացաբար առաջ էր գնում երկու ազգերի փոխադարձ մտերմութեան ընդարձակումը։ Պարլամենտական կեանքի զարգանալը Ռուսաստանում, ռուս գրական և գիտական տաղանդների փայլուն գործունէութիւնը նուաճում էին համակրական զգացմունքներ Անգլիայում։

Եւ ահա այսօր երկու ազգերի միջև կազմվել է միացնող մի կամուրջ, որը խոստանում է տալ երկուսին էլ թէ քաղաքական և թէ հասարակական բարիքներ։

Երկու հզօր համաշխարհային պետութիւնների միութիւնը ունի գործելիքներ նրանց թէ եւրոպական և թէ մանաւանդ ասիական քաղաքականութեան ասպարէզներում։

Մասնաւորելով ռուս-անգլիական մերձեցման ազդեցութիւնը Կովկասի և Կովկասին կից Պարսկաստանի ու Թիւրքիայի գործերի ընթացքի վրա, մենք պէտք է արձանագրենք, որ այդտեղ ապրող ազգերը ՀԱՍՎԵԼ են անցեալում այդ երկու պետութիւնների հակառակութիւնից, և բարգաւաճած կը լինէին, եթէ Անգլիան և Ռուսաստանը համաձայն կերպով կարգադրած լինէին իրանց քաղաքական գործողութիւնները Մերձաւոր Արևելքում։

Անգլիական լուսաւոր ազգի մերձեցումը Ռուսաստանին այնպիսի համակրելի մի երեւոյթ է, անգլիական և ռուսական փոխադարձ հակառակութեան դադարելը այնքան կարևոր հանգամանք է, որ ամեն մի լուրջ քայլ այդ մերձեցման ասպարէզում պէտք է նկատվի իբրև խոշոր քաղաքական և հասարակական մի եղելութիւն։

Եւ մենք, ըմբռնելով լայն իմաստով անգլո-ռուսական մտերմութիւնը, ողջունում ենք անգլիական հիւրերին՝ ասելով «բարի լինի ձեր գալուստը»։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յունվարի

Պետերբուրգ.— Շնորհվեց Բարձրագոյն շնորհակալական հրովարտակ Կայսերական Ժողովրդական Տան հոգաբարձու պրինց Ալէքսանդր Օլդենբուրգսկիի անունով։ Հրովարտակը վերջանում է ամենաողորմած խօսքերով՝ թէ նոր շինութեան մեծ դահլիճը և ժողովրդական աուդիտորիան կոչվելու է պրինց Ալէքսանդր Օլդենբուրգսկիի անունով։

Մինիստրների խորհրդի նախագահի մօտ տեղի ունեցաւ մեծ ճաշկերոյթ, որին ներկայ էին իտալական, գերմանական, ֆրանսիական, անգլիական, եապոնական դեսպանները, Պալատի և արտաքին գործերի մինիստրները և բարձր հասարակութեան այլ ներկայացուցիչներ։

—

Պարիզ.—Պատգամաւորների պալատ։ Պուանկարէն կարդաց Թիւրքաց դեսպանութեան նամակը՝ Կարմիր Կաղնու խմբի անցնելուն վերաբերեալ։ Պուանկարէն ասում է, որ յաճախակի վստահեցրեց Իտալիային խմբի չէզոքութեան մասին, սակայն իտալական դեսպանի իր կառավարութեանն արած յայտարարութիւններից առաջ «Մանուբան» գրաւվեց. Պուանկարէն հեռագրեց Հռոմ և Կալիարի. Կալիարիի հեռագիրը վերադարձվեց պարզ գրելու համար. իտալական կառավարութիւնը հաւաստիացրեց Հռոմում պաշտօնավարող ֆրանսիական հաւատարմատարին, թէ ճանապարհորդները թիւրք օֆիցէրներ են, որոնք կարող են ձերբակալվել իբրև պատերազմական գերիներ։ Թիւրքաց դեսպանը շարունակում է պնդել, թէ ճանապարհորդները պատկանում էին Կարմիր Կաղնու խմբին և չը պէտք է յանձնվէին Իտալիային. միայն ձերբակալված անձերին Ֆրանսիային վերադարձնելուց յետոյ կարելի էր իսկական իրողութիւնը երևան հանել։ Այդ նպատակով միջոցներ են ձեռք առնված։ Իտալիան յայտնել է, որ անկարող է հրաժարվել խուզարկելու իրաւունքից և պատրաստ է քննել առաջադրված հարցերը։ Այդ յայտարարութեան մէջ Պուանկարէն տեսնում է հարցի շուտափոյթ լուծումն, որպիսին կարելի է ձեռք բերել բարեկամական բանակցութիւններով ճանապարհորդներին ազատ թողնելուց յետոյ։ Միջադէպը չէն խախտի ընդհանուր շահերով կապված երկիրների բարեկամական յարաբերութիւնները։

Պուանկարէի ճառից յետոյ միջադէպի քննութիւնը աւարտվեց։ Պալատը ձեռնարկեց շարունակելու ընտրողական օրէնքի օրինագծի քննութիւնը։

Մամուլը միաբերան վկայում է Պուանկարէի աշխատութիւնը և գոհունակութիւն է յայտնում նրա ճառի հաստատուն և միաժամանակ հաշտարար տոնի առիթով։

—

Լօնդոն.—Անգլիական պատուիրակութիւնը [illegible]

—

Կ. Պոլիս.—Լուրերի համաձայն՝ վակուֆների և ծովային մինիստրները հրաժարվել են։

—

Զուլֆա.—Զինուորական աւտոմոբիլներով Թաւրիզից տեղս բերվեց վիրաւոր և հիւանդ զինուորների երկրորդ խումբը՝ թւով 30 մարդ։

—

Բելգրադ.—Կուլուարներից բղխող լուրերի համեմատ, ֆինանսական օրինագծերի քննութիւնից յետոյ եկող շաբաթ նախատեսվում է պարլամենտի արձակումը և կաբինէտի հրաժարականը։ Անկախ-արմատական Մաշիչ մինիստրների խորհրդի նախագահին հարցապնդում ներկայացրեց այն մասին, որ գոյութիւն ունի զինուորական գաղտնի կազմակերպութիւն «Սև-ձեռք» անունով, որին հովանաւորութիւն է ցոյց տալիս զինուորական մինիստրը։

Լուրերի համաձայն, գահաժառանգը թողնում է զօրքի գլխաւոր տեսչի պաշտօնը։ Այդ լուրը, որ դեռ ևս ըստուգված չէ, անհաճոյ տպաւորութիւն թողեց քաղաքական շրջաններում։

—

Պրագա.—Հիւսիսային Զեխիայի գերման գիւղացիների միութեան ժողովում պանգերմանիստ Իրօն իր ճառում ընդգծեց, որ աւստրիական քաղաքականութիւնը ստացել է սլաւոնական բնաւորութիւն, և յայտնեց, թէ զօրքը ուժեղացվում է մեծ սլաւոնական Աւստրիա ստեղծելու նկատումով։ Գերմանիան չէ կարող իր յոյսը դնել աւստրիական զօրքի աջակցութեան վրա ի նկատի ունենալով նրա սլաւոնական մեծամասնութեան դէպի Գերմանիան ունեցած ատելութիւնը. Գերմանիան լաւ կանէր դաշնակցութիւն որոնէր Ռուսաստանի հետ, և այդ դաշնակցութիւնը աւելի յուսալի կը լինէր, քան աւստրիականը։

Ապա Իրօն ասաց, որ Աւստրո-Ունգարիան մտադիր է ապագայում բոսնիական անեքսիայի օրինակով գրաւել հարաւ-սլաւոնական մնացած երկիրները. երիտասարդ սլաւոնները աւստրիական միջոցներով ուսանում են Վիէննայի համալսարանում, պարտաւորվելով յետոյ ագիտացիա մղել յօգուտ Ալբանիան Աւստրո-Ունգարիային միացնելու։

—

Բուխարէստ.—Թագաւորը երկու երկարատև ունկնդրութեան ընդունեց օպոզիցիայի լիդէրներին։ Պալատները իրանց պարապմունքները վերսկսեցին օպոզիցիայի բացակայութեամբ։

—

Մադրիդ.— Մինիստրների խորհրդի նիստում, լուրերի համաձայն, համարեա անխուսափելի է ընդունվել Կանալէխասի կաբինէտի հրաժարականը քաղաքական յարաբերութիւնները բարդանալու պատճառով։

—

Բերլին.—Բէյլիստագը գումարվում է յունվարի 26-ին։

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՈՒՀԱՏ

(Պատմական վեպ։ Գրեց Գ. Գ.)

10 դարերի

Ս. ՍԻՍԱԿՅԱՆ—ՄԱՇՏՈՑԻ

Ամենայն ինչ, որ գոյություն ունի մեր աշխարհում, ունի իր սկիզբը, ունի իր զարգացումը, ունի իր ապրումները, ունի իր մահը։

ԴԱՎԱՓԱՍՈՎՈՍ ԴԱԺԱՌԴ

Ամերիկայի Հայ Դատակալների Միության Նախագահ Պարոն Գ. Գ. Գասպարյանի

Ամերիկայի Հայ Դատակալների Միության Նախագահ Պարոն Գ. Գ. Գասպարյանի՝ Նիւ Եորքի Հայ Դատակալների Միութեան

Թիֆլիսի տրամվայի վերատեսուչ ինժ. Ե. Բէյլոյ և ստանձնեց իր պաշտօնը։

✦ Համառուսական կօօպերատիվ համագումարի կազմակերպիչ կոմիտէն Պետերբուրգում իր բիւրօյի անդամ ընտրեց գիւղատնտես Յարութիւն Փիրալեանին։

✦ Յունվարի 14-ին Թիֆլիսի արհեստագիտական դպրոցի վերատեսուչ Ե. Ակունեանը հասարակական ակումբում կը կարդայ մի դասախօսութիւն «Մի հոգու դատախարակութիւնը» (Էլեն Կէյ) խորագրով։ Դասախօսութիւնից յետոյ տեղի կունենայ զրոյց և երաժշտա-գրական բաժին։

✦ Վրաց Ֆիլարմոնիկ Ընկերութիւնը ի յիշատակ վրաց համերգի գոյութեան 25-ամեակի նախագծում է կազմակերպել մի համերգ։ Վրաց լեզուով տրվող համերգի առաջին նախաձեռնողը եղել է Ներկայիս հանգուցեալ Վլ. Ազնիաշվիլին, որի յիշատակի յարգումը տեղի կունենայ համերգի ժամանակ։ Ֆիլարմոնիկ Ընկերութեան վարչութիւնը դիմել է վրաց կրթական բոլոր ընկերութիւններին, խնդրելով ուղարկել Հայական ներկայացուցիչ այս հանդիսաւոր տօնակատարութեան ծրագիրը միացեալ ոյժերով մշակելու համար։

✦ Յունվարի 10-ին Թիֆլիսում ձերբակալվեց վարչական կարգով արտորված Արտէմ (Նա ինքը նաև Յարութիւն) Խաչատուրեան Մարգարեանը։ Նա պատասխանատուութեան է ենթարկվում։

✦ Յունվարի 10-ին Սերեբրեանայա փողոցում ձերբակալվեց Համբարձում Յարութիւնեանը, որը 1911 թ. մայիսին փախել էր զինուորական ծառայութիւնից և մինչև այսօր թաքնվում էր։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 2 յունվարի*)

«Մշակի» անցած տարվայ № 290-ում զգուշանքով կարդայի սխալմամբ մարդ կոչված չակերտաւոր մանկավարժի «վայ-չիս զառանցանքը»։ Կարդայր և աւելի ևս խորը հասուզվեցի, թէ այդ հիանդպին գառանցանքի հեղինակը տառապում է ուղեղի անսօրմալութեամբ։

Արդէս փաստ, որպէս ապացոյց այդ իրողութեան, որ նրա ուղեղը այլևս դադարել է կանոնաւոր գործելուց, հետևեալ պարզ, սեկին և որևէ տարակուսութիւն չը վերցնող նամակն, որ գրել էի՝ այդ «մանկավարժի» բաց նամակի առիթով, «Հօրիզոնի» խմբագրութեան, առաջ եմ բերում այդ նամակս նոյնութեամբ,—կէտառուկէտ։ Անաւասիկ.

«Պ. խմբագիր։

«Ահա պատասխանս վերևի բաց նամակը զրողին.

«Այդ նամակն ընթերցողը ակամայ պէտք է կարծէ, թէ երկ չէ մէկել օրն է մեր միջև ընդհարումն տեղի ունեցել, մինչդեռ ձիգ տարիներ են սահել-անցկացել այդ «կրողի» ակնարկած գրքերս լոյս տեսնելուց յետոյ։

«Իրա ժամանակին այդ առիթով ես իմ կարգական խօսքս ասել եմ արդէն և ահա հիմա էլ կրկնում եմ ընդգծելով նախկին ասածներս.

«— Այդ սխալմամբ մարդ կոչվածը եթէ իրաւ է որ պատիւ և բարի ատուն ունի, ինչպէս որ կամենում է հաւատացնել, ապա ուրեմն թող դիմէ օրինական դատարան, և այն՝ դոնբաց, սղաբլական (ստենոգրաֆիկ) մանրամասնութեամբ դատարան»։

(«Հօրիզոն» № 274, 1911 թ.).

Այն, դէպի օրինական դատարան և այն՝ անպատճառ դոնբաց, որպէսզի նորից, չը կարողանայ իր խայտառակվելը ծածկել՝ դոնփակ դատարանի վՀան աղաւաղելով, որի առիթով երկրորդ անգամ իմ դէմ սուտ վկայութեան համար խաղկ ու խայտառակ եղաւ «Մշակի» մէջ փաստաբանիս նամակ-պատասխանով։ Բացի դրանից՝ որպէսզի հնարաւոր լինի այդ սխալմամբ մարդ կոչված արարածից—ոչ իմանայ գուցէ նաև ուրիշ՝ դրա նման մարդակերպ հրէշներից,—իսպառ ազատել ազգութեանս գոյութեան հիմնաքար ու պահապան հրեշտակ հայ ընտանիքը, ազգիս քաղցը լոյս ու յարատևութեան առհաւատչեայ հայ-դպրոցը և հայութեան տարաղնած, ցիրուցան եղած անդամներին հոգեպէս իրար կապող մեր պաշտելի ու պանծալի եկեղեցին ընդհանրապէս և Թիֆլիսի Կուսանաց եկեղեցին մասնաւորապէս։

Ընթերցող, ասացէք՝ ամէնն։

Լևոն Մելիք-Ադամեանց

*) Սրանով միանգամայն վերջ ենք դնում այս բանակռուին։ Խմբ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Անգլիական հիւրերը Պետերբուրգում բացի Կայսրից ընդունվելուց, առանձին կարևոր խորհրդակցութեան են մասնակցելու ռուսաց դեկավարանձանց ներկայութեամբ։ Գլխաւոր խնդիրը Ֆրանս-ռուսական դաշնակցութիւնն է լինելու, որի մէջ խոշոր դեր խաղալու է նաև Անգլիան։

✦ Այս գարնանը սպասվում են անակընկալներ եւրօպական կեանքում։ Բալկանեան պետութիւնները ծրագիրներ են մշակում ակտիվ կերպով երևելու Թիւրքիայի դէմ՝ ի նկատի ունենալով սրա ներքին խռովութիւնները։ Թիւրքիան, լրագիրների ասելով իր անաջողութիւնները քաւելու է մի ընդհանուր հրդեհ սանդղելով և բոլորովին փոխելով Եւրօպայի քաղաքական կերպարանքը։

✦ Ինչպէս յայտնի է, այս յունվարի 17-ին Պետերբուրգում կը ձեռնարկվի «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի քննութեան։ Համարեա բոլոր մեղադրեալներին տարել են մայրաքաղաք։ Բոլոր 600 վկաներին ուղարկված են կոչնագրեր։ Մեղադրեալներին պաշտպանելու են ի միջի այլոց Պետական Դումայի անդամ Մակլակով, Տելէնկո և Աչեմեան, երգչ.-հաւատարմատարներ Կարաբչէվսկի, Մուրավիէվ, Գրուզէնբերգ, իշխան Էրիստով, Զարուդնիյ, Անդրոնիկով, Մասլէնիկով և այլն։

✦ Թէհրանում և Թաւրիզում զինուորա-դաշտային դատարանը շարունակում է գործել։ Թաւրիզում տեղի ունեցան երեք նոր մահապատիժներ։ Ազգաբնակութիւնը ահաբեկված է։

✦ Թաւրիզից եկողները պատմում են, որ հայերը ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել ֆէդայիների ինքնագլուխ նախայարձակումներին ռուս զօրքերի վրա։ Ընդհակառակն, հայերը խելամտութեամբ խորհուրդ են տուել զրդռված պարսիկներին խուսափել այդ տեսակ քայլից։

✦ Ամերիկեան ֆինանսական այն գործակալները, որոնք հրաւիրված էին Շուստեր Մորգանի կողմից Վաշինգտոնից տրված խորհրդի համաձայն, որոշել են մնալ Պարսկաստանում և շարունակել պարապմունքները։

✦ Տրիպոլիսում թիւրք-իտալական պատերազմի մէջ առանձին փոփոխութիւն չը կայ։ Միայն իտալացիները վերջին օրերս բաւական առաջացան դէպի օազիսի ներսը։ Կ. Պոլսում տիրող անսօրմալ դրութեան պատճառով այլևս նոր թիւրքական զօրքեր չեն ուղարկվում պատերազմի դաշտը։

✦ Դէրնայի մօտերը այս օրերում կատաղի կռիւ տեղի ունեցաւ իտալացիների և արաբ-թիւրքական զօրամասերի միջև։ Վերջիններս փախան, թողնելով կռի դաշտում 400 ից աւելի սպանվածներ և վիրաւորվածներ։

✦ Չին հանրապետական զէներալ Լի շրջապատել է կառավարական զօրաբանակը և երեք օրվայ ժամանակամիջոց է տուել անձնատուր լինելու համար։ Զօքերի մի մասը արդէն անձնատուր է եղել, միւսները դեռ տատանվում են։

✦ Տոկիօյից տեղեկացնում են, որ պետութիւնները համաձայնել են Չինաստանը երկու հանրապետութիւնների վերածելու նկատմամբ, այն է հիւսիսայինի և հարաւայինի։

✦ Չին յեղափոխականները խոշոր խմբերով արշաւում են դէպի Պէկին։ Կառավարական դեկավարը շրջանները գլուխները կորցրել են։ Դրութիւնը աւելի բարդանում է Իւանշիկայի կեանքի դէմ կատարված անաջող մահափորձով։ Այն համոզմունքն է տիրում, որ յունվարի 12-ին կը հրատարակվի պաշտօնական ազդ ներկայ դինաստիայի գահից հրաժարվելու մասին։ Դրութիւնը յուսահատական է։

✦ Ֆանատիկոս մանջուրները որոշել են մինչև իրանց արեան վերջին կաթիլը պաշտպանել ներկայ դինաստիան։ Մանջուրները կազմ-պատրաստ սպասում են ճակատ առ ճակատ հանդիպելու յեղափոխականների զօրամասերին։

✦ Ֆրանսիացի խաղաղասէրները յորդորում են Ֆրանսիական կառավարութեան յանձն առնել միջնորդ լինելու Թիւրքիայի և Իտալիայի միջև վերջնականապէս խաղաղութիւն կապել տալու նպատակով։

✦ Ինչպէս յայտնի է, իտալացիները գրաւեցին Ֆրանսիական երկու նաւեր այն պատճառով, որ նրանց վրա կային Թիւրք օֆիցէրներ, և մի քանի աէրոպլաններ, որոնք, իտալացիների կարծիքով, յատկացված են Թիւրքերի համար։ Այդ հանդամանքը ահագին աղմուկ բարձրացրեց Ֆրանսիայում։ Ներկայումս կաբինէտի անդամների, ինչպէս նաև մամուլի և դեկավար շրջանների մի մասը կողմնակից է միջադէպը խաղաղութեամբ հարթելուն, մինչդեռ մյուս մասը տրամադրված է ռազմի ոգով և պահանջում է զէնքը ձեռքին պաշտպանել Ֆրանսիայի արժանապատուութիւնը։ Ամենօր հեռագրով մտքերի փոխանակութիւն է կատարվում այդ առիթով Պարիզի և Հռոմի միջև։ Հռոմի ֆրանսիական դեսպանին ուղարկվում են շաբաթական նորանոր հրահանգներ։

✦ Իլիոդոր արեղան Սարատովում կազմակերպել է նահանգական սօիւզնիկների կոմիտէտ 4-րդ Պետական Դումայի ընտրութիւնների առիթով։ Շուտով տրվելու են թռուցիկներ։

✦ Էրենտալի դէմ արշաւանքը ստանում է կատաղի բնաւորութիւն։ Էրենտալը հանդիսատրամադրութիւն է ցոյց տալիս, որովհետև արժանացաւ կայսրի վստահութեան։ Մինչդեռ նրա կողմնակիցները լուրեր են տարածում թէ իբր Էրէնտալը հրաժարվելու է հիւանդութեան պատճառով։

✦ Այս տարի Վիէննայի «երաժշտութեան բարեկամների արքայական ընկերութիւնը» կազմակերպում է երաժշտագէտների համաշխարհային մրցումն 10,000 կրօնի մրցանակով։ Իւրաքանչիւր երաժշտագէտ կարող է ներկայացնել մի ամբողջացած երաժշտական գրուածք մինչև 1912 թ. մայիսի 1-ը։ Ժիւրիի կազմի մէջ մտնում են երաժշտագէտներ բոլոր երկիրներից։ Ռուսաստանի կողմից հրաւիրված է երաժշտագէտ Գլազունովը։

✦ Սալոնիկից հաղորդում են, որ զինուորական ծառայութեան մէջ վերընտրվում են արդիւլ-համիդեան բէժիսի օֆիցէրները։

✦ Անգլիական հրէաները ագիտացիա են սկսել Ռուսաստանում ազատ մուտք ունենալու օգտին։

✦ Ռուսաց դեկավար շրջանները խորհրդակցելով՝ նպատակայարմար գտան Ազէֆի գործի առիթով ցանկալի եղանակ գտնել, այսինքն ներումն շնորհել բարձրագոյն կարգով ոստիկանութեան դեպարտամենտի նախկին պետ Լոպուխինին։

✦ Պետական Դուման կարձակվի մայիսի վերջերին։ Նոր Դումայի ընտրութիւնները տեղի կունենան սեպտեմբերին։ Դուման կը բացվի նոյեմբերի 20-ին։

✦ Սարատովի եպիսկոպոս Գերմոգենը արձակված է սինոդի անդամութեան պաշտօնից, եկեղեցական բարեկարգութիւնների դէմ արտայայտվելու պատճառով։

✦ «Սև-ծով-Դնեպրեան շոգենաւային ընկերութիւնը» սնանկացաւ։ Վրնասը հաւասարվում է 1.500,000 ռուբլու։

✦ Հոկտեմբերեանները հարց են յարուցել բացառիկ դրութիւնների վերացման և անձի անձեռնմխելիութեան օրինագծի վերաքննութեան նկատմամբ։

«Բեկ» թերթը հոկտեմբերեանների այսպիսի քայլը անուանում է մի ցոյց ընտրութիւնների նախօրեակին արված։

✦ Դրաւվեց «Звѣзда» թերթի № 36-ը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

10 յունվարի

ՕԴԵՍՍԱ։ Դուման վերաքննելով իր նախկին որոշումը յատկացրեց 40,000 ռուբլի Սուոլիպինի արձանի համար և որոշեց կառուցանել բիւստ, յատկացնելով 4000 ռուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բացվեց Պետական Դումայի նստաշրջանը։ Բօրինսկի 1-ինը հրաժարվեց Դումայի անդամութիւնից Պետական Խորհրդի անդամ նշանակվելու պատճառով։ Հետևեալ նիստը վաղն է։

Պետական Խորհրդի նիստում քարտուղարը յայտնեց, որ այն օրինագիծը, որով զրամական վճար է որոշված ֆին քաղաքացիների համար զինուորական ծառայութեան կատարման փոխարէն, հաստատութիւն գտաւ Թագաւոր Կայսրի կողմից։

Պրինց Օլդենբուրգսկիի նախագահութեամբ Բարձրագոյն թոյլտուութեամբ կազմվեց մի կազմակերպչական կոմիտէ՝ Պետերբուրգում երկրորդ տնային ոգուրծական-արդիւնաբերական ցուցահանդէս հաստատելու համար։

Ծովային մինիստրութիւնը մինիստրների խորհրդից խնդրում է յատկացնել կըրկին 11½ միլիոն ռուբլի սև-ծովեան նաւատորմի կառուցման համար։

Քաղաքապետը որոշեց 3 ամսով բանտարկել «Гроза»-ի խմբագրին «Եպիսկոպոսի արցունքները» յօդուածի համար։

Առևտրի մինիստրութիւնը աւարտեց առևտրական դպրոցների նօրմալ ծրագիրների մշակումը։ Ժող. լուս. մինիստրութեան մէջ քննվելուց յետոյ ծրագիրները կը գործադրվեն 1912/3 ուսումնական տարում։

ԲԵՐԼԻՆ։ Ֆրիդրիխ Մեծի ծննդեան 200-ամեակի օրվայ առիթով սկսվեցին հանդէսներ։ Կայսրը Թագաւորական գեղարուեստի ճեմարանում բացեց յօբելեանական ցուցահանդէսը կայսրուհու, պրինցների և պետական կանցլերի ներկայութեամբ։

ՊՐԱԳԱ։ Մեքենագործական արհեստանոցների տէրերի միութիւնը լոկաուտի ենթարկեց 9000 բանուորներին։

ԼՕՍԱՆԳԷԼՕՍ։ Միջազգային մրցութեան մէջ օդագնաց Ռուտէրֆօրդկէշ ընկաւ 50 մետր բարձրութիւնից և մեռաւ։

ՕԴԵՍՍԱ։ Սառնամանիքների պատճառով նաւահանգստում սառոյցը ամրացաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄԱՍՆՈՒՄ ԲԺՇՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Գ. Մ. ՀԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Ֆ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներական, վիրաբուժութեան և միկասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկաֆատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Մ. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Ց. ԴՈՒՐԴԷՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺՇԿ Պ. Մ. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ռ. Նաւասարդեան
1. 0—2

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. թոքերի հիւանդութիւններ)
Ընդունելութիւն (առաւօտեան ժ. 12—1-ը։
(երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէյրուտովսկայա, № 66.
(ա.օ.) 10ɔ . 100—56

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական վիներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունելութիւն (12½—2 ժ. ցերեկվայ։
(5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։
Սօլօլակ, Բէյրուտովսկայա, № 33 (անկիւն Պասկևիչի փողոցի)։ Տելեֆոն № 1175.
(ե. հ.կ.) 888. 100—51

ԲԺԻՇԿ ԱՆԴՐԵԱՍ ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումներ, արիպէրի լուացումներ, վիրաբուժութիւն, մասսաժ, էլեկտրականութիւն։ Հիմնաւոր բուժումն սուր և խրոնիք. տրիպէրի, սերմնահոսութեան, սեռական թուլութեան և անկարողութեան՝ հմուտ բժիշկ. ցուցմունքով։ Օտարերկրեայ հիւանդներին գրաւոր խորհուրդներ և բէյցպտներ (վճարը 3 ր.)։ Եկեղեցիին ցոյց եմ տալիս հմուտ մասնագետ բժիշկների բոլոր հիւանդութիւնները, նաև կանանց և ծննդաբեր. հիւանդ. բժիշկների։ Ծառայողներին և աշակերտ-աշակերտուհիներին բժ. օգնութիւնը մեծ զիջումով։ Իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., կարելի է պահանջել ինձանից կամ Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներից նպաստով։ Ընդունելութիւնը՝ կանանց 2—3 ժ., տղամարդկանց 3—4 ժ. ամեն օր։ Հասցէս. Тифлисъ, Семеновская ул., № 9, Վօրօնցովի արձանի մօտ։
(ե.հ.կ.) 892. 50—46

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. և Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկոլայէվսկայա, № 36.
(ա.օ) 1212. 25—6

Լոյս տեսաւ եւ վաճառվում է հռչակաւոր Քրանսիացի գրող
ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻ
ԻՆՆՍՈՒՆ-ԵՐԵՔ
նշանաւոր վէպի հայերէն թարգմանութիւնը
„ԱՐՕՐ“ ամսագրի
հրատարակութեամբ
Այս կլասիկական չքնաղ վէպը, որի նիւթը վերցված է ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից, պէտք է կազմէ ամեն մի մտաեղաղարանի զարդը և լիսի ընթերցանութեան ամենացանկալի նիւթ։
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Ի նկատի ունենալով, որ տպված է միայն 400 օրինակ, ուստի ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստանալ, ուղարկելով իրանց պահանջը և դրամը «Մշակի» խմբագրութեան։
Գիրքը բաղկացած է 432 մեծադիր էջերից։
10—8

Հրատարակութիւն «ՊԵՍՏԱԼՈՑԻ» գրատան
ԳՈՒՐԳԻՆ ՀԱՅԿՈՒՆՈՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՅԿՆԵՐ ԳՈՒՆԱՒՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ
Լոյս են տեսել
1) ԴԵՐՁԱԿ ԱՂՈՒԷՍԸ . . 25 կ.
2) ԱԲԼԱՐԻ ԴԱՏԸ . . 20 »
3) ՁՂՋԻԿ . . . 5 »
Տպագրվում են
4) ՄԱՐԴԻԿ ԱՊԵՐԱՒՈՏ
5) ԲԱԴՆ ՈՒ ԳՈՐՏԸ
6) ՊԱՍ ՊԱՀՈՂ ԱՂՈՒԷՍԸ
7) ԿԱՏՈՒԻ ԲԻԼԷԹԸ
Գումարով գնողներին սովորական զեղչ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный и писчебумажный магазинъ «Песталоцци», Михайл. пр., № 99. (հ. կ.) 1214. 3—3

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զարմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաները են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկակ., բանկային և զարդարական), 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի մրա. 7) Գրելիչագրութիւն, արագագրութիւն (ամենամամ ձեռքի ուղղումն), բ) ոչ-պարտադիր. 1) Ռուս լեզուներ. 2) Աշխարհագրութիւն. 3) Գաղտիլագրաֆիա (բիմիզոն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զարմունքները կատարվում են և գատ-գատ։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Զարմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
(ա. օ.) 1193. 0—12

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՆՕՆԻՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Աւտոմօբիլային հաղորդակցութեան Կովկասում
ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԶՄԵՐԱՅԻՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
Նոյեմբերի 2/15-ից 1911 թ.
ԲՕՐԺՕՄԻ, ԱԽԱԼՑԽԱՅԻ եւ ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻ միջև։
Բօրժօմից Ախալցխա մեկնումը ամեն օր, երկ. ժամը 4-ին։
Ախալցխայից Բօրժօմ մեկնումը առաւօտեան ժամը 9-ին։
Շաբաթական մէկ անգամ, ուրբաթ օրերը, ուտօմօբիլը կը գնայ մինչև Աբասթուման և կը վերադառնայ հետևեալ օրը՝ օսբաթ, առ. ժամը 8-ին, մտնելով նաև Ախալցխա առ. մօտ ժամը 9-ին։
ԳՆԵՐԸ { Բօրժօմ—Աբասթուման՝ 5 ռուբլի։
Բօրժօմ—Ախալցխա՝ 3 ռուբլի։
Ախալցխա—Աբասթուման՝ 2 ռուբլի։
Բագաժի համար՝ առանց արտօնեալ 1 պուդի՝ իւրաքանչիւր պուդին 50 կ.։
(ե.հ.շ.կ.) 1066. 4—4

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, վարանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ իրաշիրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՏԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՑՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆոն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.